ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Ռուբինա Պետրոսյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ժամանակակից յուրաքանչյուր պետության սոցիալական գործառույթի կարևոր բաղադրիչ է բնակչության թույլ ապահովված, խոցելի խմբում գտնվող խավի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնդիրը[1]: Պետության այս գործառույթի իրականացման նախապայմաններ են երեխայի՝ ինքն իր մասին հոգ տանելու օբյեկտիվ անընդունակությամբ պայմանավորված օբյեկտիվ անհրաժեշտությունը, մարդու ինչպես նաև հասարակության՝ օգնություն ցուցաբերելու և խնամք իրականացնելու պահանջմունքը, պետության՝ որպես հանրային իշխանության մարմնի[2] ընդունակությունն ու շահագրգռվածությունը խոցելի խմբում գտնվող իր այս քաղաքացիների սոցիալական պաշտպանության՝ խնամքի և դաստիարակության կազմակերպման հարցերում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ[3] ամրագրված է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են (37-րդ հոդվ., 4-րդ մաս), իսկ ընտանեկան օրենսգրքի[4] **109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն**՝ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա: Վկայակոչված դրույթներն անառարկելիորեն վկայում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների՝ պե-

---

[1] Երեխաների՝ ծնողական խնամքից և հոգատարությունից զրկվելու պատճառներն ու հիմնախնդիրները ուսումնասիրված են մի շարք հեղինակների կողմից: Առավել մանրամասն տե՛ս **Нечаева А.М.** Детская беспризорность - опасное социальное явление//Государство и право, 2001, N 6, էջ 60-63: **Озеров В.А.** Детская беспризорность и безнадзорность как один из факторов угрозы национальной безопасности России//Право и образование, 2002, N 1, էջ 5-12: **Рябухин С.Н.** Детская безнадзорность и преступность несовершеннолетних как следствие социально-экономической трансформации российского общества//Право и образование, 2002, N 1, էջ 13-19 և այլն:

[2] Տե՛ս **Мамут Л.С.,** Социальное государство с точки зрения права//Государство и право. 2001, N 7, էջ 5:

[3] ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է 06.12. 2015թ. հանրաքվեով, ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդվ. 1118:

[4] ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 09.11.2004 թ., ուժի մեջ է մտել 19.04.2005 թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376), Հոդվ. 60:

տության հատուկ խնամքի և հոգածության ներքո գտնվելու փաստի մասին, սակայն այս երեխաների նկատմամբ պետության՝ ի դեմս խնամակալության և հոգաբարձության մարմնի, խնամքի և դաստիարակության կազմակերպման, այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով նրանց վերապահված այլ իրավունքների իրացման պարտականությունները, այս երեխաների՝ իրենց համապատասխան իրավունքների իրացման իրավունքն ինքնին առաջանալ չի կարող: Դա առաջանում է իրականության մեջ գոյություն ունեցող այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնց հետ օրենքը կապում է որոշակի իրավաբանական հետևանքներ: Նման հանգմանքները կոչվում են իրավաբանական փաստեր: Իրավացի է երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառի հեղինակավոր մասնագետ Ա. Մ. Նեչաևան՝ ասելով, որ ծնողական խնամքի բացակայությունը դասվում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շարքին[1], որքանով որ այն հանգեցնում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից որոշակի պարտականությունների առաջացման: Այդ պատճառով էլ կարևոր է այն հարցը, թե որ պայմանների և հատկանիշների միաժամանակյա առկայության, ինչ կարգով դրանց հաստատման դեպքում է երեխան համարվում «առանց ծնողական խնամքի մնացած»: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ օրենսդրության մեջ հանդիպում ենք «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» և «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացությունների միաժամանակյա և զուգահեռ կիրառության, իսկ մասնագիտական գրականության և օտարերկրյա օրենսդրության մեջ՝ նաև «որբ երեխա» և «սոցիալական որբություն» հասկացություններին, ուստի այս համատեքստում «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության իրավական բնորոշման հարցի ուսումնասիրությունն ու վերլուծությունը մեր կարծիքով ունեն կարևոր նշանակություն:

Նախ՝ անդրադառնանք «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացությանը: Իրավաբանական գրականության մեջ եղած տեսակետներից մեկի համաձայն՝ իրավական իմաստով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին են պատկանում առաջին հերթին նրանք, որոնց ծնողները մահացել են (նաև՝ երբ մահանում է միայնակ մայրը), երկրորդ՝ այն երեխաները, որոնց մասին կենդանի ծնողները չեն ցանկանում կամ չեն կարող հոգ տանել[2]: Այդպիսիների թվին են դասվում ծնողական իրավունքներից զրկված, ծնողական իրավունքները սահմանափակված, դատական կարգով անգործունակ ճանաչված, դատարանի կողմից մահացած հայտարարված, ծանր հոգեկան հիվանդություններով տառապող, ազատազրկման վայրերում գտնվող ծնողները: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած են համարվում այն երեխաները, որոնք, որևէ պատճառով կամ հանգամանքով պայմանավորված, իրենց ծնողների հետ միասին չեն ապրում[3]: Անդրադառնալով ծնողական խնամքի բացակայությանը՝ Ա. Մ. Նեչաևան նշում է, որ երեխայի նկատմամբ ծնողական խնամքի բացակայության փաստի մասին կարող են վկայել անչափահասի աճող օրգանիզմին, զարգացմանն անհրաժեշտ տարրական, կենսական խնամքի բացակայությունը, որի արտաքին

---

[1] Տե՛ս **Нечаева А. М.,** Охрана прав детей-сирот в России (История и современность). М.: Дом, 1994, էջ 82:

[2] Տե՛ս Комментарий к семейному кодексу Российской Федерации, 2-е издание, переработанное и дополненное, отвественный редактор: доктор юридических наук, профессор **А. М. Нечаева,** Юрайт, Москва, 2009, էջ 366:

[3] Տե՛ս Improving Protection for Children without Parental Care, A Call for International Standards – Working Paper, UNICEF International Social Service, August 2004, էջ 2:

դրսևորումը սովորաբար լինում է քաղցած, հակասանիտարական պայմաններում, առանց որևէ խնամքի ապրելը: Այնուհետև հեղինակը հավելում է. «Ծնողական խնամքի բացակայություն փաստվում է, երբ առկա են արհամարհանք ծնողական պարտականությունների նկատմամբ և անտարբերության առավելագույն աստիճան երեխաների հանդեպ»[1]: Ընդունելով հիշատակված տեսակետները՝ առավել համապարփակ ենք համարում Պ. Վ. Կրաշենինիկովայի հետևյալ բնորոշումը. «Առանց ծնողական խնամքի մնացած է համարվում յուրաքանչյուր երեխա, որը ինչ-որ պատճառով զրկվել է ծնողական խնամքից, դաստիարակությունից, հոգատարությունից»[2]: Ընդհանրացնելով այս հասկացության շուրջ մասնագիտական գրականության մեջ եղած մոտեցումները և համարելով, որ երեխայի նկատմամբ ծնողական խնամքն արտահայտվում է ծնողի կողմից երեխայի ֆիզիկական, հոգեկան վիճակի մասին հոգ տանելով, նրա լիարժեք, ներդաշնակ զարգացմանը նպաստող պայմանների ստեղծմամբ, նրա իրավունքների և շահերի բարեխիղճ պաշտպանությամբ՝ կարծում ենք, որ անկախ այն հանգամանքից, թե այս ամենը չի կատարվել օբյեկտիվ թե սուբյեկտիվ հանգամանքների պատճառով, առկա է միևնույն կարգավիճակը, իսկ ծնողի մեղքի ձևով ու դրսևորած վարքագծով պայմանավորված՝ տարբեր կարող են լինել դրա հաղթահարման եղանակները և նրանց համար հնարավոր պատասխանատվությունը կամ դրանից ազատումը:

Ընտանեկան օրենսգրքում, ինչպես նաև հայրենական իրավագիտության մեջ, բացակայում է «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության սահմանումը, իսկ Ընտանեկան օրենսգրքում նշվում են միայն այն հանգամանքները, որոնց առկայությունը կարող է վկայել ծնողական խնամքից զրկվելու մասին: Դրանք են՝ ծնողների մահը, նրանց ծնողական իրավունքներից զրկելը, ծնողական իրավունքները սահմանափակելը, ծնողներին անգործունակ ճանաչելը, ծնողների հիվանդությունը, նրանց երկարատև բացակայությունը, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելը, այդ թվում՝ իրենց երեխաներին դաստիարակչական, բուժական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության հիմնարկներից և նման այլ հիմնարկներից վերցնելուց հրաժարվելը, ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերը (**109-րդ հոդվ., 1-ին մաս**): Այս բացը փորձ է արված լրացնել «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով[3] (այսուհետ՝ Օրենք), որի 2-րդ հոդվածի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահ-

---

[1] Տե՛ս **Нечаева А. М.**, նշված աշխատ., էջ 83:

[2] Տե՛ս Семейное право, учебник под ред. **П.В. Крашенинникова**, М., Статут, 2008, էջ 226:

[3] «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 24.09.2002թ., ուժի մեջ է մտել 18.10. 2022թ., ՀՕ-411-Ն, ՀՀՊՏ 2002.10.30/46(221) հոդվ.1054:

մանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են: Ինչպես տեսնում ենք, Օրենքի հիշյալ հոդվածի համաձայն՝ անչափահաս կարող է համարվել նույնիսկ 18 տարին լրացած անձը, ինչը նշանակում է, որ միանշանակ չեն օրենսդրի մոտեցումները 18 տարեկան սահմանագծի վերաբերյալ: Օրենսդիրը, առանձին դեպքերում, նրանց առավելագույն պաշտպանության հնարավորություն տրամադրելու նպատակով երեխայի կարգավիճակին է հավասարեցնում չափահասության տարիքի հասած անձանց (իհարկե՝ չսահմանափակելով նրանց իրավասուբյեկտությունը):

Ի տարբերություն Ընտանեկան օրենսգրքի՝ Օրենքում ամրագրված է ծնողական խնամքից զրկվելու հիմքերի սպառիչ ցանկ, ինչը հիմնավոր չենք համարում, քանի որ կյանքում առաջացող հանգամանքների և իրադարձությունների բազմազանությամբ պայմանավորված՝ երեխայի՝ ծնողական խնամքից զրկվելու պատճառները կարող են բազմաթիվ և տարբեր լինել[1]: Բացի այդ, երեխաների նկատմամբ ծնողների իրավական պարտականությունների բովանդակությունը չափազանց լայն է (Ընտ. օր. 51-րդ, 52-րդ, 68-րդ հոդվածներ), իսկ դրանց չկատարումը կարող է հանգեցնել բազմաթիվ բացասական հետևանքների, դիցուք՝ երեխայի հիվանդանալու, իրավախախտում կատարելու և այլն: Պրակտիկայում սովորաբար հանդիպում ենք պատճառների համակցության. մայրը մահացել է, հայրն ազատազրկման վայրում է, հոր գտնվելու վայրն անհայտ է, մայրը տառապում է ծանր հոգեկան հիվանդությամբ և այլն: Վերջնարդյունքում այս բոլոր իրավաբանական փաստերը երեխայի համար հատուկ իրավական կարգավիճակի[2] առաջացման մեկնակետ են:

Մասնագիտական գրականության և օտարերկրյա օրենսդրության մեջ հանդիպում ենք նաև «որբ» և «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» եզրույթների միաժամանակյա գործածությանը[3]: Իրավագետների մի խումբ՝ Լ. Մ. Պչելինցևա, Պ.

---

[1] **Տե՛ս Guardianship for children deprived of parental care,** Luxembourg: Publications Office of the European Union, 2014, էջ 31:

[2] Կարծում ենք՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխան՝ ֆիզիկական և սոցիալական անօգնականության, իր մի շարք իրավունքները անձամբ իրացնել չկարողանալու, դրանց իրացման պատասխանատվությունը՝ ի դեմս պետության այլ սուբյեկտների վրա դրվելու և այլ հատկանիշների ուժով միանշանակ հանդիսանում է հատուկ իրավական կարգավիճակի կրող: «Հատուկ իրավական կարգավիճակի» գաղափարի առաջքաշման և դրա էության առնչությամբ ուշագրավ դատողություններ են արել Ռ. Պ. Մանանկովան և Վ. Ա. Պատյուլինը: Առավել մանրամասն տե՛ս **Мананкова Р. П.,** О правовом статусе гражданина СССР //Вопросы совершенствования гражданско-правового регулирования. Томск,1983, էջ 63-68: **Патюлин В. А.,** Государство и личность в СССР. М., 1974, էջ 198-199:

[3] «Որբ երեխա» և «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» եզրույթների միաժամանակյա կիրառության ենք հանդիպում մասնագիտական գրականության մեջ, օրինակ՝ Комментарий к Семейному кодексу Российской Федерации Ответственный редактор - **Кузнецова И.,** М.: Издательство БЕК. 1996: **Пчелинцева Л.,** Семейное право России: Учебник для вузов. — 3-е изд., перераб. и доп.-М., Норма, 2004: **Муратова С.А., Тарсамаева** Семейное право: Учебное пособие.— М.: Новый Юрист, 1999**: Н.Ю., М.В. Антокольская** Семейное право: Учебник. — Изд. 2-е, перераб. и доп. — М.-Юристъ, 2002, Комментарий к семейному кодексу Российской Федерации, 2-е издание, переработанное и дополненное, отвественный редактор-доктор юридических наук, профессор **А. М. Нечаева,** Юрайт, Москва, 2009: Family and Community-Based Responses: A Case Study of Fostering and Kinship Care, Child Welfare Department, Directorate of Social Affairs and Youth Rehabilitation, Ministry of Social Affairs, Labour, Vocational Training and Youth Rehabilitation, Phnom Penh, 2003: Տե՛ս, օրինակ՝ «Որբ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական աջակցության լրացուցիչ երաշխիքների մասին» ՌԴ օրենքը. ընդունված՝ 04.12.1996թ., ուժի մեջ մտած՝ 21.12.1996թ.: www.consultant.ru

Վ. Կրաշեննիկովա, Ե. Ա. Լևիցկայա, Տ. Ա. Պասիկովա, որպես «որբ» և «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացությունների տարբերակիչ հատկանիշ դիտարկում են ծնողական խնամքից և հոգատարությունից զրկվելու պատճառը: Մասնավորապես, երկու կամ միակ ծնողի մահվան հետևանքով խնամքից և դաստիարակությունից զրկված երեխային համարելով «որբ», իսկ մահվան հետ չառնչվող այլ պատճառների հետևանքով առանց խնամքի և դաստիարակության մնացած երեխային՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա»[1]:

Իրավաբանների և սոցիոլոգների շրջանակներում օգտագործվում են նաև «սոցիալական որբ» և «սոցիալական որբություն» հասկացությունները[2]: «Սոցիալական որբության» մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ երեխան ունի կենսաբանական ծնողներ, բայց ինչ-ինչ պատճառներով նրանք չեն զբաղվում երեխայի խնամքով և դաստիարակությամբ: Սխալված չենք լինի ասել, որ «սոցիալական որբ» և «սոցիալական որբություն» հասկացությունները տեսության մեջ գործածվում են առավելապես սոցիալական մանկավարժների կողմից[3] և իրենց էությամբ իրավական եզրույթներ չեն:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության բովանդակության բացահայտման համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այլ երկրների՝ մասնավորապես Ռուսաստանի Դաշնության, Լիտվայի, Իսրայելի, Վրաստանի, Ղազախստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի օրենսդրությունների վերլուծությանը:

Այսպես, ՌԴ օրենսդրությամբ, նախ, տարբերակվում են «որբ» և «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացությունները: ՌԴ ընտանեկան օրենսգրքի 121-րդ հոդվածում ՀՀ ընտանեկան օրենսգրքի համանմանությամբ ամրագրված է առանց ծնողական խնամքի մնալու հիմքերի ոչ սպառիչ ցանկ, որոնց առկայության դեպքում այս երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա, իսկ «Որբ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական աջակցության լրացուցիչ երաշխիքների մասին» ՌԴ օրենքի 1-ին հոդվածում որպես քննարկվող հասկացությունների տարբերակիչ հատկանիշ կրկին դիտարկվում է երեխայի՝ ծնողական խնամքից զրկվելու պատճառը՝ այդպիսով միակ կամ երկու ծնողների մահվան հետևանքով ծնողական խնամքից զրկված մինչև 18 տարեկան անձանց բնորոշելով «որբ», իսկ ծնողների մահվան հետ չառնչվող այլ պատճառներով[4] առանց խնամքի մնացած երեխաներին՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» եզրույթներով: Պատկերը նույն է նաև Ղազախստանի «Ամուսնության և ընտանիքի մասին» օրենսգրքում[5], որում «որբ երեխա» է դիտարկվում այն երեխան, որի երկու կամ

---

[1] Տե՛ս **Пчелинцева Л.,** Семейное право России: Учебник для вузов. — 3-е изд., перераб. и доп.-М., Норма, 2004, էջ 470: **Левицкая Е.А., Пасикова Т.А.,**Особенности правового статуса детей, оставшихся без попечения родителей: монография. Тамбов: ООО «Консалтинговая компания Юком», 2016, էջ 10: Семейное право, учебник под ред. **П.В. Крашенинникова**, նշված աշխատ., էջ 227: Այս մոտեցմամբ է առաջնորդվել նաև ՌԴ օրենսդիրը «Որբ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական աջակցության լրացուցիչ երաշխիքների մասին» ՌԴ օրենքում «որբ» և «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացությունները սահմանելիս (1-ին հոդված):

[2] Տե՛ս Сиротство как социальная проблема, под ред. **Л.И. Смагиной**, Минск, 2005, էջ 6-7:

[3] **Տե՛ս Василькова Ю.В., Василькова Т.В.,** Социальная педагогика. М..1999, էջ 299:

[4] Նշենք, որ այս օրենքում հանգամանքների սպառիչ ցանկ ամրագրված չէ:

[5] Տե՛ս Ղազախստանի Հանրապետության «Ամուսնության և ընտանիքի մասին» օրենսգիրք: https://online.zakon.kz/document/?doc_id=31102748#pos=416;-92:

միակ ծնողը մահացել է, իսկ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա»՝ ծնողի կամ ծնողների մահվան հետ չառնչվող այլ պատճառների հետևանքով[1] խնամքից և հոգատարությունից զրկված երեխան: Այստեղ սահմանված են նաև «կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա» և «հրաժարված երեխա» հասկացությունները: «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա» է համարվում երեխան, որի կենսագործունեությունը ձևավորված հանգամանքների արդյունքում խախտվել է, և որը միայնակ կամ ընտանիքի օգնությամբ նշված հանգամանքները հաղթահարել չի կարող, ինչպես նաև հատուկ կրթական հաստատություններում գտնվող երեխաները: Հետաքրքրական է «հրաժարված երեխա» հասկացության բնորոշումը. «Երեխա, որի ծնողները հրաժարվել են նրա հետագա դաստիարակությունից, կրթությունից, նյութական ապահովությունից՝ համապատասխան իրավաբանական փաստաթղթերի ձևակերպմամբ» (1-ին հոդված, 1-ին մաս, 5-րդ, 6-րդ, 17-րդ կետեր): Ինչպես տեսնում ենք, վերջին դեպքում ծնողի կողմից խնամքի իրականացման պարտականությունից հրաժարումը ստանում է ֆորմալ ձևակերպում:

Լիտվայի քաղաքացիական օրենսգրքի[2] «Ընտանեկան իրավունք» վերտառությունը կրող 1-ին մասում ամրագրված չէ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացությունը: Միայն վերջինիս 4-րդ գլխում՝ խնամակալությանը և հոգաբարձությանը վերաբերող ընդհանուր դրույթներում, նշված է, որ առանց պաշտպանության մնացած անձը և առանց կառավարման մնացած գույքը վստահվում են խնամակալների կամ հոգաբարձուների խնամքին, ովքեր պարտավոր են ներկայացնել նշված անձանց և տվյալ գույքը, իսկ խնամակալությանը և հոգաբարձությանը վերաբերող դրույթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խնամակալության սահմանման հիմք է անչափահասների՝ ծնողական իշխանությունից ազատվելը[3] կամ նրանց երկու ծնողների մահը: Իսրայելի օրենսդրությունը ևս չի բացահայտում «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացությունը: «Երեխաների որդեգրման մասին» Իսրայելի օրենքի 13-րդ հոդվածում թվարկվում են այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում երեխան դատարանի կողմից ճանաչվում է որդեգրման ենթակա: Դրանք են՝ երեխայի ծնողի ինքնության, բնակության վայրի կամ կրոնական պատկանելության որոշման անհնարինությունը, ծնողի մահը, դատական կարգով անգործունակ ճանաչումը, ծնողական իրավունքներից զրկումը, ծնողի կողմից երեխային բախտի քմահաճույքին թողնելը կամ առանց հարգելի պատճառների անընդմեջ վեց ամիս երեխայի հետ շփումից խուսափելը, առանց հարգելի պատճառի վեց ամիս անընդմեջ ծնողական պարտականությունների կատարումից խուսափելը, երեխայի՝ վեց ամիս հայրական տանը չբնակվելը, իր վարքագծի կամ կարգավիճակի պատճառով երեխային խնամելու

[1] Ղազախստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրությամբ ամրագրված հիշյալ հասակցության մեջ նշված հանգամանքները գրեթե նույնությամբ կրկնում են ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասում և ՌԴ ընտանեկան օրենսգրքի 121-ին հոդվածի 1-ին մասում՝ նշված առանց ծնողական խնամքի մնալու դեպքերը:

[2] Гражданский закон Латвийской Республики: http://www.pravo.lv/likumi/05_1_gz.html

[3] Որպես ծնողական իշխանության դադարման հիմքեր նշված են՝ ծնողների կամ երեխայի մահը, անհետ կորած ծնողին մահացած հայտարարելը, ծնողների համաձայնությամբ՝ երրորդ անձի կողմից երեխայի որդեգրումը, երեխայի չափահասության տարիքի հասնելը, ծնողական իշխանության դադարումը՝ դատարանի որոշմամբ (Լիտվայի քաղաքացիական օրենսգիրք, 198-րդ հոդված):

անհնարինությունը և այլն[1]: Այստեղ ևս հանդիպում ենք որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների թվարկման, որոնց առկայությունը, չնայած ուղղակի ձևակերպման բացակայությանը, վկայում է երեխայի ծնողական խնամքից զրկված լինելու մասին: **Ուշագրավ է որոշ դեպքերում երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնալու փաստի հաստատումը հստակ ժամկետից կախվածության մեջ դնելը:** Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի «Ընտանեկան իրավունք» վերտառությունը կրող 5-րդ գրքում ևս քննարկվող հասկացությունն ամրագրված չէ, սակայն 1275-րդ հոդվածի 1-ին մասում նշված է, որ անչափահաս երեխաների նկատմամբ, որոնք ծնողների մահվան, նրանց՝ ծնողական իրավունքներից զրկելու, անգործունակ, հիվանդ ճանաչելու կամ այլ պատճառներով մնացել են առանց ծնողական խնամքի, նրանց դաստիարակության, անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների և շահերի պաշտպանության համար նշանակվում է խնամակալություն կամ հոգաբարձություն[2]:

Գերմանիայի օրենսդրությանը հայտնի չէ վերը հիշատակված հասկացութունների և ոչ մեկը: Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անչափահասի նկատմամբ խնամակալ է նշանակվում, եթե նրա վրա չի տարածվում ծնողական խնամք, կամ ծնողներն իրավունք չունեն նրան ներկայացնելու անձնական ոչ գույքային կամ գույքային հարաբերություններում, ինչպես նաև այն դեպքում, երբ հնարավոր չէ սահմանել նրա ընտանեկան կարգավիճակը: Նախատեսված է նաև խնամակալության գործերով դատարանի նախաձեռնությամբ երեխայի նկատմամբ խնամակալ նշանակելու հնարավորութուն, երբ հարկ է ենթադրել, որ ծննդյան պահից երեխայի համար խնամակալ է պահանջվում, խնամակալ կարող է նշանակվել նաև մինչև երեխայի ծնունդը, սակայն նշանակումն իրավաբանական ուժ է ստանում երեխայի ծննդյան պահից[3] (Գերմանիայի քաղ. օր., 1773-րդ, 1774-րդ հոդվ.): Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի՝ որդեգրմանը նվիրված հոդվածներից մեկում ամրագրված է «լքված երեխա» եզրույթը: Լքված է համարվում մասնավոր անձի, հիմնարկի կամ երեխաների սոցիալական օգնության ծառայության կողմից ընդունված երեխան, որի ծնողները մեկ տարվա ընթացքում նրա նկատմամբ բացահայտ հետաքրքրություն չեն ցուցաբերում, որին նախորդել է երեխային ծնողների կողմից լքված ճանաչելու մասին դիմումը: Այն պահից սկսած՝ մեկ տարվա ընթացքում, երբ ծնողները բացահայտ դադարել են երեխայի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերել, մասնավոր անձը, հիմնարկը կամ երեխաների օգնության սոցիալական ծառայությունը, որոնք ընդունել են երեխային, պարտավոր են երեխային լքված ճանաչելու մասին դիմում ներկայացնել: Այսպիսի երեխան բարձրագույն ատյանի դատարանի կողմից ճանաչվում է լքված: Երեխայի նկատմամբ հետաքրքրության արտահայտումը դադարած են համարվում այն ծնողները, որոնք ե-

---

[1] Гражданское законодательство Израиля, науч. ред.- директор Института независимых правовых и экономических исследований «Юридический центр-Наука» Н. Э. Лившиц.- СПб.: Изд-во « Юридический центр-Пресс», 2003, էջ 579:

[2] Гражданский кодекс Грузии/ Науч.ред. З. К. Бигвава. Вступителная статья Председателя Верхного уда Грузии, докт. Юрид. Наук, проф. Л. Чантурия. Предисловие канд. Юрид. Наук, доцента СПБГУ, заместителя прокурора Санкт-Петербурга А. В. Коновалова. Перевод с грузинского И. Мериджанашвили, И. Чиковании.-СПБ.: Издательство «Юридический центр-Пресс», 2002, էջ 641:

[3] Տե՛ս Гражданское уложение Германии, 2-е издание, дополненное, Москва, Волтерс Клувер, 2006, էջ 448:

րեխաների հետ չեն պահպանել կապվածության, մտերմության պահպանման համար անհրաժեշտ հարաբերություններ (Ֆրանսիայի քաղ. օր., հոդվ. 350)[1]:

Այսպիսով, վերլուծելով քննարկվող հարցի շուրջ մասնագիտական շրջանակներում առկա կարծիքները և այլ երկրների փորձը, հանգում ենք այն եզրակացության, որ նախ՝ ծնողական խնամքից զրկվելու պատճառով պայմանավորված՝ միևնույն բովանդակությունն ունեցող երևույթի առթիվ տարբեր եզրույթների գործածումը զուտ ձևական բնույթ է կրում և գործնականում այս երեխաների իրավական կարգավիճակում ոչինչ չի փոխում, երկրորդ՝ որևէ կերպ չի կարող ազդել այն խնամքի և հատուկ սոցիալական աջակցության վրա, որը միանման ձևով պետության կողմից տրամադրվում է ծնողական խնամքից զրկված բոլոր երեխաներին՝ անկախ դրա հիմքում ընկած հանգամանքներից[2], երրորդ՝ ծնողական խնամքից զրկվելու հիմք հանդիսացած պատճառը, թերևս, նշանակություն կարող է ունենալ միայն երեխայի՝ ընտանիքի հետ վերամիավորման պոտենցիալ հնարավորության և ընտանեկան օրենսգրքով ամրագրված ընտանեկան դաստիարակության առաջնայնության սկզբունքի իրացման առումներով: Մինչդեռ օրենսդրական մակարդակում երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնալու հիմք հանդիսացող հանգամանքների սպառիչ ամրագրմամբ օրենսդիրը գործնականում բացառում է որևէ այլ պատճառով ծնողական խնամքից և դաստիարակությունից զրկված երեխային այդպիսին ճանաչելու, վերջինիս համապատասխան կարգավիճակը դե ֆակտո ընդունելու և իրավասու մարմնի կողմից դե յուրե ամրագրելու ու դրանից բխող և միայն այս կատեգորիայի երեխաներին վերապահվող իրավունքների իրացումն ապահովելու հնարավորությունը: Ուստի գտնում ենք, որ ինչպես ծնողների մահվան, այնպես էլ այլ պատճառներով երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնալու դեպքերում անառարկելիորեն պետք է գործի իրավական պաշտպանության, սոցիալական արտոնությունների և երաշխիքների միասնական համակարգ, իսկ բովանդակային առումով՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» և «որբ» եզրույթները հարաբերակցվում են ինչպես ընդհանուրն ու հատուկը:

Այս համատեքստում անշուշտ պետք է անդրադառնալ նաև «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացությանը: «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացության ներքո ընդգրկվող երեխաներ են համարվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, անտուն, հաշմանդամ, ֆիզիկական և հոգեկան զարգացման թերություններ ունեցող, զինված և ազգամիջյան հակամարտությունների, էկոլոգիական, տեխնոգեն և տարերային աղետների (ինչպես նաև բռնագաղթվածների և փախստականների երեխաները) զոհ երեխաները, բռնության զոհ դարձած երեխաները (այդ թվում՝ ընտանիքում վեճերի և դաժան վերաբերմունքի), կատարած հանցագործության համար ազատազրկման վայրերում պատիժը կրող երեխաները, շեղված վարքագիծ ունեցող երեխաների համար նախատեսված հատուկ դաստիարակչական հաստատություններում գտնվող երեխաները, գործազուրկ քաղաքացիների երեխաները և կյանքի այլ դժվարին իրավիճա-

---

[1] Гражданский кодекс Франции (Кодекс Наполеона), (предисловие, комментарии, примечания **В. Н. Захватаева)**, Москва. Берлин, Инфотропик Медиа, 2012, էջ 122:

[2] Տես ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշում:

կում գտնվող երեխաները, որը նրանք չեն կարող ինքնուրույն հաղթահարել[1]: Ներկայացված իրավիճակների բազմազանությունը, թվում է, «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացության առավել լայն, իսկ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության դրանից ածանցյալ լինելու և նեղ բովանդակություն ունենալու մասին է վկայում, սակայն այս հասկացությունների համեմատական վերլուծությունը հակառակն է փաստում:

Այսպես, ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի[2] (այսուհետ՝ Փոփոխություններ) ընդունումը Ընտանեկան օրենսգրքում բացակայում էր «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացությունը, իսկ խնամատար ընտանիքը դիտարկվում էր սոսկ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխայի դաստիարակության համար տեղավորման ձևերից մեկը, իսկ Փոփոխությունների արդյունքում 137-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ *«Խնամատարությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության ժամանակավոր կազմակերպումն է այլ ընտանեկան միջավայրում իրավասու մարմինների կողմից ընտրված, հաշվառված, վերապատրաստված, որակավորված անձի միջոցով մինչև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացած իրավիճակի վերացումը»* ձևակերպմամբ կարծես ամբողջովին փոխվեց խնամատար ընտանիքի առաքելության ուղղությունը՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխայից» դեպի «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա»: Մինչդեռ Ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասում որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպմանն ուղղված ինստիտուտներ հստակ նշված են՝ որդեգրումը, խնամակալությունը (հոգաբարձությունը), խնամատար ընտանիքը, իսկ դրանց կիրառության անհնարինության դեպքում՝ դաստիարակչական, բժշկական հաստատությունը, բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունները կամ բնակչության կամ երեխայի սոցիալական պաշտպանության նպատակ հետապնդող այլ կազմակերպությունները: Ինչպես տեսնում ենք, վկայակոչված հոդվածներում առկա է սկբունքային հակասություն, մի դեպքում խնամատար ընտանիքը, ի թիվս ընտանեկան օրենսգրքում ամրագրված այլ ինստիտուտների, կոչված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպմանը, մյուս հոդվածը գալիս է հերքելու՝ դիտարկելով այն միայն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման ժամանակավոր ձև: Մինչդեռ Օրենքի 11-րդ հոդվածը վերնագրված է *«Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությունը»:* Կարծում ենք՝ արդեն այս ձևակերպմամբ օրենսդիրը արձանագրում է ուսումնասիրվող հասկացությունների գրեթե նույնաբովանդակ լինելը և միևնույն հարթությունում գտնվելը: Ուստի առաջարկում ենք, Ընտանեկան օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 138-րդ հոդվածի 1-

---

[1] Տե՛ս **Р. Л. Мурзин,** Формы устройства детей, оставшихся без попечения родителей: семейно-правовой аспект, дис., Москва-2006, էջ 13:

[2] «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 21.12.2017թ., ուժի մեջ է մտել 12.01.2018թ., ՀՕ-10-Ն, ՀՀՊՏ 2018.01.17/4(1362) Հոդ.28 :

ին մասում «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված» բառերից առաջ լրացնել «առանց ծնողական խնամքի մնացած» բառերը:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի[1] 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝«կյանքի դժվարին իրավիճակ է համարվում հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, **առանց ծնողական խնամքի մնալու**, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող»: Ինչպես տեսնում ենք, վկայակոչված հասկացությունը, ի թիվս այլ հանգամանքների, ներառում է նաև առանց ծնողական խնամքի մնալու դեպքերը, բայց հարց է առաջանում՝ ինչ իմաստ է ներդրված առանց ծնողական խնամքի մնալու դեպքերը կրկին մեկ այլ հասկացության շրջանակներում օգտագործելու մեջ, երբ վերջինիս նվիրված է ամբողջ իրավական ինստիտուտ, արդյոք այս համատեքստում առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավական պաշտպանության այլ իրավական մեխանիզմ է գործում: Միանշանակ կարծում ենք, որ ոչ[2]. պարզապես օրենսդիրը երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնալը և այդպիսով կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը պայմանավորում է միայն ծնողի կամքից անկախ առաջացած օբյեկտիվ գործոններով, և այս հասկացության մեջ չեն ներառվում ծնողի սուբյեկտիվ կամահայտնության արդյունքում երեխայի առանց խնամքի և դաստիարակության մնալու դեպքերը, քանի որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ծնողը ցանկանում է, սակայն ի վիճակի չէ իրականացնել իր երեխայի հետագա պատշաճ խնամքն ու դաստիարակությունը: Մեր այս տեսակետի հավաստումն է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի[3] 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված հետևյալը ձևակերպումը. *«… մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող»*: Սա մեկ անգամ ևս հավաստում է ծնողի կողմից երեխային խնամելու օբյեկտիվ ահնարինության մասին, ուստի, մեր համոզմամբ, ստեղծված «դժվարին իրավիճակները» պետք չէ նույնացնել

[1] «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 17.12.2014թ., ուժի մեջ է մտել 30.12. 2014թ., ՀՕ-231-Ն, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1, Հոդ.1253.20:

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումը, որով կարգավորված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման, խնամքի և դաստիարակության կազմակերպմանն ուղղված ողջ ընթացակարգը:

[3] «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 30.12. 2014թ., ՀՕ-231-Ն, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1, Հոդ.1253.20:

«առանց ծնողական խնամքի մնալու» դեպքերի հետ: ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների բացահայտման, հաշվառման կարգը[1], դրա համար պատասխանատու մարմինը կամ մարմինները, պարզ չէ՝ ով, որ մարմինը և ինչպես է հաստատում երեխայի՝ «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելու» հանգամանքը, որն էլ անհրաժեշտ իրավական հիմք կհանդիսանա վերջինիս նկատմամբ խնամատարություն սահմանելու կամ այլ սոցիալական արտոնություններ տրամադրելու համար և այլն: Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) նախատեսված կարգի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կամ լիազորած պետական մարմնի հետ համապատասխան պայմանագիր կնքած սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում խնամքը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող երեխաներին (82-րդ կետ), կարող ենք հանգել այն եզրակացության, որ ինչպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, այնպես էլ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերումը և խնամքի ու դաստիարակության կազմակերպումը խնամակալության և հոգաբարձության մարմինների պարտականությունն են, ինչն էլ, մեր համոզմամբ, «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացության՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացությունից բխելու հավաստումն է:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխա» և «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացությունները միմյանցից տարբերվում են նաև կախված երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնող սուբյեկտից: Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության ձևերը բաժանվում են երկու խմբի՝ խնամքի և դաստիարակության անհատական և ոչ անհատական ձևեր[2]: Անհատական խնամքի և դաստիարակության հանձնելիս երեխայի խնամքը հանձնվում է խիստ որոշակի ֆիզիկական անձի (անձանց), որի ընտրության ժամանակ կիրառվում են օրենքով սահմանված չափանիշներ: Խնամքի և դաստիարակության կազմակերպման այդպիսի ձևեր են երեխայի որդեգրումը, խնամակալությունն ու հոգաբարձությունը, խնամատար ընտանիքը: Երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման ոչ անհատական ձևի ժամանակ երեխայի խնամքն ու դաստիարակությունը հանձնվում են կազմակերպությանը, իրավաբանական անձին: Երեխայի դաստիարակության և նրա նկատմամբ իրականացվող խնամքի որոշակի գործողություններ իրականացնում են ֆիզիկական անձինք՝ կազմակերպության աշխատակիցները, սակայն նրանց անձը՝ երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման այս ձևի համար իրավական նշանակություն չունի, իսկ նրանց առաջադրվող պահանջներն ընդհանուր բնույթի են: Ներկայումս Ընտ. օր-ի 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնամքի և դաստիարակության կազմակերպման ոչ անհատական ձևեր են հանդիսանում երեխային դաստիարակ-

[1] Այս առնչությամբ հարկ է նշել, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալներն ամրագրվում և պահպանվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մանուկ տեղեկատվական» համակարգում, որտեղ մուտքը հանրությանը հասանելի չէ:

[2] Տե՛ս Семейное право, учебник под ред. П.В. Крашенинникова, նշված աշխատ., էջ 231-232:

չական, բժշկական հաստատություն, բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպություններ կամ բնակչության կամ երեխայի սոցիալական պաշտպանության նպատակ հետապնդող այլ կազմակերպություններ հանձնումը: Ինչ վերաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, ապա, ինչպես տեսնում ենք, եթե նրանց նկատմամբ խնամքի և դաստիարակության կազմակերպման ոչ անհատական ձևն ամբողջությամբ ևս կիրառելի է, ապա պատկերն այլ է անհատական ձևի դեպքում՝ գործող իրավակարգավորումների համատեքստում նրանց նկատմամբ, որպես խնամքի և դաստիարակության կազմակերպման անհատական ձև, կիրառելի է միայն խնամատար ընտանիքի ինստիտուտը (Ընտ. օր., 20-րդ գլուխ):

Ուսումնասիրվող հասկացությունների բովանդակային տարբերությունն ընդգծող հաջորդ հատկանիշը խնամքի և դաստիարակության կազմակերպման տևողությունն է: Վերը նշված օրենսդրական կարգավորումներն արդեն իսկ նախանշում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային համապատասխան հիմնարկներ կամ խնամատարության հանձնելը որպես վերջիններիս խնամքի և դաստիարակության կազմակերպման բացառապես ժամանակավոր ձև օգտագործելը, մինչև համապատասխան իրավիճակների հաղթահարումը: Ինչ վերաբերում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ որևէ հատուկ հիմնարկում գտնվելուն, ապա այն, պայմանավորված ընտանեկան օրենդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ ընտանեկան դաստիարակության առաջնայնության սկզբունքի ապահովմամբ, ևս ի սկզբանե հանդիսանում է խնամքի և դաստիարակության կազմակերպման ժամանակավոր ձև, իսկ խնամակալության և հոգաբարձության մարմինները պարտավոր են շարունակել մանկատանը կամ որևէ այլ հիմնարկում տեղավորված երեխայի համար համապատասխան ընտանիքի որոնումը, և միայն այդպիսին չգտնվելու դեպքում այն կարող է վերածվել խնամքի և դաստիարակության կազմակերպման մշտական ձևի: Խնամքի և դաստիարակության այնպիսի ձև, ինչպիսին խնամակալությունն ու հոգաբարձությունն է, մեր համոզմամբ, կրում է ժամանակավոր-հրատապ բնույթ, սակայն դրա՝ մշտական ձևի վերածումը բացառված չէ:

Այսպիսով, կարծում ենք, չնայած այն հանգամանքին, որ առանց ծնողական խնամքի մնացած և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաները որոշ հատկանիշներով նման են, այդուհանդերձ գոյություն ունեցող որոշիչ տարբերակիչ հատկանիշները թույլ չեն տալիս նրանց ամբողջովին նույնացնել: Ինչ վերաբերում է «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» ինքնուրույն իրավական կատեգորիայի առանձնացմանը, մեր համոզմամբ, այն առավելապես հետագայում այդ երեխայի «առանց ծնողական խնամքի մնացած երեխայի» կարգավիճակում հայտնվելը կանխարգելող նպատակ է հետապնդում:

Վերոգրյալից ելնելով՝ կարծում ենք՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխային բնութագրական են հետևյալ հատկանիշները՝

- ծնողական խնամքից և հոգատարությունից զրկվելը՝ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների հետևանքով,
- իրավասու մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի՝ ծնողական խնամքից զրկված լինելու փաստի հաստատում
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնական, այդուհետև՝ կենտրոնացված հաշվառում օրենսդրությամբ սահմանված կարգով

- խնամքի և դաստիարակության անհատական և ոչ անհատական ձևերի կիրառում:
- խնամքի և դաստիարակության կազմակերպման ժամանակավոր և մշտական ձևերի կիրառում:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության առավել համապարփակ ձևակերպման, այդպիսով անկախ ծնողական խնամքից և հոգատարությունից զրկվելու հանգամանքներից, հատուկ կարգավիճակում հայտնված այս երեխաների համար իրավական պաշտպանության, սոցիալական արտոնությունների և երաշխիքների միասնական համակարգի անվերապահ կիրառման, ինչպես նաև Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածում ամրագրված դրույթներին առկա հակասության վերացման նպատակով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններն անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ. **«Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած՝ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների հետևանքով ծնողական խնամքից և դաստիարակությունից զրկված և իրավասու մարմնի կողմից առանց ծնողական խնամքի մնացած ճանաչված երեխան:**

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնք մինչև իրենց 18 տարին լրանալը տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների հետևանքով զրկվել են ծնողական խնամքից և դաստիարակությունից՝ իրավասու մարմնի կողմից ճանաչվելով առանց ծնողական խնամքի մնացած երեխա»:

ХАРАКТЕРНЫЕ ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО СТАТУСА РЕБЕНКА, ОСТАВШЕГОСЯ БЕЗ РОДИТЕЛЬСКОГО ПОПЕЧЕНИЯ СОГЛАСНО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА

Рубина Петросян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

Выявление характерных особенностей детей, оставшихся без родительского попечения, четкое и комплексное закрепление понятия «ребенок, оставшийся без родительского попечения» необходимы для соответствующего признания правового статуса детей данной категории, и таким образом, независимо от обстоятельств лишения родительского ухода и заботы, безусловного применения единой системы защиты социальных привилегий и гарантий.

CHARACTERISTIC FEATURES OF THE LEGAL STATUS OF CHILDREN WITHOUT PARENTAL CARE IN ACCORDANCE WITH LEGISLATION OF THE RA

Rubina Petrosyan
Post-graduate student at the YSU Chair of Civil Law

The identification of the characteristics of the child remaining without parental care and the clear and comprehensive establishment of the concept of "children without parental care" must be set forth for the recognition of the respective legal status of the children belonging to this category, thereby providing the unconditional application of the unified system offering children protection, social privileges and guarantees despite the reasons of parental deprivation.

Բանալի բառեր – *առանց ծնողական խնամքի մնացած երեխա, որը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա, խնամակալության և հոգաբարձության մարմին, խնամատար ընտանիք, խնամքի և դաստիարակության անհատական և ոչ անհատական ձևեր, խնամքի և դաստիարակության կազմակերպման ժամանակավոր և մշտական ձևեր*
Ключевые слова – *ребенок, оставшийся без родительского попечения, сирота, ребенок, оказавшийся в трудной жизненной ситуации, орган опеки и попечительства, приемная семья, индивидуальные и неиндивидуальные формы попечительства и воспитания, временные и постоянные формы опекунства и воспитания.*
Key words – *children without parental care, orphan, a child in a difficult situation:, a body of custody and guardianship, foster family, individual and non-individual forms of care and upbringing, temporary and permanent forms of care and upbringing*